

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2004թ. հունվարին կազմել են 63691.9 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 76843.9 մլն.դրամ, դրանց աճի տեմպերը 2003թ. հունվարի համեմատ, համապատասխանաբար, կազմել են 125.6% և 118.1%:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2004թ. հունվարին 2003թ. հունվարի նկատմամբ աճել են 17.9%-ով:

Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը


(%)

	Տեսակարար կշիռը եկամուտներում		2004թ. հունվարի աճի տեմպը 2003թ. հունվարի նկատմամբ	2004թ. տեսակարար կշռի տոկոսային փոփոխությունը 2003թ. նկատմամբ
	հունվար			
	2003	2004		
Դրամական եկամուտներ	100	100	125.6	-
<i>որից օգտագործվել է</i>				
ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար	97.9	91.5	117.3	-6.4
պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար	5.5	5.6	129.2	0.1
ավանդների հավելած	-7.8	1.9	-	9.7
արտարժույթի գնում	23.6	13.6	72.6	-10.0
այլ ծախսեր	9.2	8.0	110.0	-0.8
Դրամական ծախսեր	128.3	120.6	118.1	-7.7
<i>Եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ</i>	<i>-28.4</i>	<i>-20.6</i>	<i>109.3</i>	<i>7.8</i>


Աշխատանքի վարձատրություն: 2004թ. հունվարին, ըստ յուրաքանչյուր ամիս օպերատիվ վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 կազմակերպությունների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, աշխատողների միջին անվանական աշխատավարձը կազմել է 36448 դրամ և 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 31.7%-ով: Բյուջետային կազմակերպություններում աշխատողների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 25148 դրամ և 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 49.1%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում աշխատողներին, համապատասխանաբար, 46487 դրամ և աճել՝ 23.9%-ով:

Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի 2003թ. դեկտեմբերին

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Ընդամենի նկատմամբ, %		Նախորդ տարվա նկատմամբ, %	
	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր
Ընդամենը	43536	32737	100.0	100.0	136.2	121.7
Արդյունաբերություն	63139	53193	145.0	153.5	116.9	131.9
Գյուղատնտեսություն	32231	26243	74.0	74.6	134.9	131.3
Անտառտնտեսություն	16366	15579	37.6	52.9	113.5	104.5
Տրանսպորտ	60962	51469	140.0	161.5	125.2	109.7
Կապ	73968	55808	169.9	201.0	107.5	103.4
Շինարարություն	60651	49235	139.3	166.7	119.9	110.1
Առևտուր, հանրային սնունդ	20040	16458	46.0	71.5	96.1	82.4
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	46896	40774	107.7	136.1	104.3	102.5
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	16694	13760	38.3	47.4	122.8	106.0
Կրթություն	19962	17198	45.9	53.4	135.6	115.8
Մշակույթ	18303	13836	42.0	42.4	139.9	120.3
Արվեստ	25500	15526	58.6	49.5	169.5	122.3
Գիտություն և գիտական սպասարկում	34491	25800	79.2	81.8	118.3	117.6
Վարկավորում և ապահովագրություն	235053	132020	539.9	395.4	174.1	119.2
Կառավարման ապարատ	110082	53314	252.9	161.0	187.8	138.1
Այլ	43066	30050	98.9	97.0	116.0	114.6



Աշխատավարձի տատանումն ըստ տնտեսության ճյուղերի ընդամենը միջինի նկատմամբ, %



Անվանական միջին աշխատավարձի հարաբերակցությունը ՀՀ սահմանված նվազագույն աշխատավարձի նկատմամբ 2002-2004 թթ.

